ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 մարտի 2018 թվականի N 81-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 95-րդ և 96-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.37-րդ, 1.38-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի հունվարի 19-ի N 15-Ա հրամանը՝ **որոշում եմ.**

1. Հաստատել 2018 թվականի երկրորդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության ընազավառները, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը համաձայն հավելվածի:

2. Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի հունվարի 25-ի N 1/32.1/727-16 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության լիազոր մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող իրավական և մասնագիտական հսկողության հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական ոլորտում գործող այլ անձանց (համաձայնությամբ):

5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ յուրաքանչյուր համայնքում իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում, իրավական և մասնագիտական հսկողության Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:

6. Յուրաքանչյուր համայնքում իրավական և մասնագիտական հսկողությունն ավարտելուց հետո, սահմանված ժամկետում հսկողության արձանագրությունը և արդյունքները ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2018 թվականի մարտի 28
ք. Հրազդան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2018 թվականի մարտի 28-ի N 81-Ա որոշման

2018 թվականի երկրորդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառները, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

| հ/հ | Համայնքի անվանում | Ժամանակահատվածը | Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառ | Հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ) | Ազգանուն, անուն |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Կամարիս | նոյեմբեր 2015 - ապրիլ 2018 | 1.Արտակարգ իրավիճակների բնագավառ<br>2.Անտառի և ծառայությունների բնագավառ<br>3. Բնապահպանության բնագավառ<br>4. Ընդերքօգտագործման բնագավառ<br>5. Անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության բնագավառ<br>6. Հողօգտագործման բնագավառ<br>7. Կրթության բնագավառ<br>8. Մշակույթի բնագավառ<br>9. Պաշտպանության բնագավառ<br>10. Սոցիալական պաշտպանության բնագավառ<br>11.Տրանսպորտի և կապի բնագավառ<br>12. Առողջապահության բնագավառ<br>13. Քաղաքաշինության բնագավառ<br>14. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների մի շարք բնագավառներ | ղեկավար՝<br>ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ<br>անդամներ՝<br>1. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի առաջատար մասնագետ<br>2. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ<br>3. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ<br>4. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի տեղակալ<br>5.ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ<br>6. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության առաջատար մասնագետ | Ալեքսանյան Հարություն<br><br>Թումոյան Ռոբերտ<br><br>Բաղդասարյան Սեդա<br><br>Վարդանյան Արմեն<br><br>Թումոյան Կարեն<br><br>Բունիաթյան Կարեն<br><br>Հովսեփյան Հակոբ |
| 2 | Քասախ | փետրվար 2015 - ապրիլ 2018 | 1.Արտակարգ իրավիճակների բնագավառ<br>2.Անտառի և ծառայությունների բնագավառ<br>3. Բնապահպանության բնագավառ<br>4. Ընդերքօգտագործման բնագավառ<br>5. Անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության բնագավառ<br>6. Հողօգտագործման բնագավառ<br>7. Կրթության բնագավառ<br>8. Մշակույթի բնագավառ<br>9. Պաշտպանության բնագավառ<br>10. Սոցիալական պաշտպանության բնագավառ<br>11. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառ<br>12.Տրանսպորտի և կապի բնագավառ<br>13. Առողջապահության բնագավառ<br>14. Քաղաքաշինության բնագավառ<br>15. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների մի շարք բնագավառներ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | *Մրգաշեն* | *հուլիս 2015 - մայիս 2018* | 1.Արտակարգ իրավիճակների բնագավառ<br>2.Առևտրի և ծառայությունների բնագավառ<br>3. Բնապահպանության բնագավառ<br>4. Անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության բնագավառ<br>5. Հողօգտագործման բնագավառ<br>6. Կրթության բնագավառ<br>7. Մշակույթի բնագավառ<br>8. Պաշտպանության բնագավառ<br>9. Սոցիալական պաշտպանության բնագավառ<br>10.Տրանսպորտի և կապի բնագավառ<br>11. Առողջապահության բնագավառ<br>12. Քաղաքաշինության բնագավառ<br>13. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների մի շարք բնագավառներ | | |
| 4 | *Գետաշեն* | *հոկտեմբեր 2015 - հունիս 2018* | 1.Արտակարգ իրավիճակների բնագավառ<br>2.Առևտրի և ծառայությունների բնագավառ<br>3. Բնապահպանության բնագավառ<br>4. Ընդերքօգտագործման բնագավառ<br>5. Անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության բնագավառ<br>6. Հողօգտագործման բնագավառ<br>7. Մշակույթի բնագավառ<br>8. Պաշտպանության բնագավառ<br>9. Սոցիալական պաշտպանության բնագավառ<br>10. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառ<br>11.Տրանսպորտի և կապի բնագավառ<br>12. Առողջապահության բնագավառ<br>13. Քաղաքաշինության բնագավառ<br>14. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների մի շարք բնագավառներ | | |
| 5 | *Գեղադիր* | *մայիս 2015 - մայիս 2018* | 1.Արտակարգ իրավիճակների բնագավառ<br>2.Առևտրի և ծառայությունների բնագավառ<br>3. Բնապահպանության բնագավառ<br>4. Անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության բնագավառ<br>5. Հողօգտագործման բնագավառ<br>6. Մշակույթի բնագավառ<br>7. Պաշտպանության բնագավառ<br>8. Սոցիալական պաշտպանության բնագավառ<br>9.Տրանսպորտի և կապի բնագավառ<br>10. Առողջապահության բնագավառ<br>11. Քաղաքաշինության բնագավառ<br>12. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների մի շարք բնագավառներ | | |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 մարտի 2018 թվականի N 82-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ 100 ՏՈԿՈՍ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՎՃԱՐՈՎԻ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ, ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՈՒ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետի՝ **որոշում եմ.**

1. Հաստատել՝

1) «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2018 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 1 հավելվածի,

2) «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2018 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 2 հավելվածի,

3) «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2018 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 3 հավելվածի

4) «Չարենցավանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2018 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 4 հավելվածի,

5) «Աբովյանի ծննդատուն» պետական փակ բաժնետիրական ընկերության կողմից 2018 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 5 հավելվածի,

6) «Նոր-Հաճնի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության կողմից 2018 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 6 հավելվածի:

7) «Հրազդանի մարզային արյան բանկ» պետական փակ բաժնետիրական ընկերության կողմից 2018 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող բժշկական ծառայությունների տեսակներն ու սակագները՝ համաձայն N 7 հավելվածի,

8) «Վիմա Խաչատրյանի անվան Գառնիի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2018 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 8 հավելվածի:

9) «Ջրվեժի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2018 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 9 հավելվածի,

10) «Նոր Գեղիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2018 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 10 հավելվածի,

11) «Պռոշյանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2018 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 11 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության առողջապահական ընկերությունների և կազմակերպությունների տնօրեններին՝

1) ապահովել բնակչության իրազեկումը Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման պահանջների մասին,

2) ապահովել կազմակերպությունների կողմից վճարովի սկզբունքով տրամադրվող ծառայությունների մատուցումը համաձայն հաստատված գնացուցակի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի ապրիլի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2018 թվականի մարտի 28
ք. Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 մարտի 2018 թվականի N 83-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ 100 ՏՈԿՈՍ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ 728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետի՝ **որոշում եմ.**

1. Հաստատել՝

1) «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 2 հավելվածի,

3) «Չարենցավանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 3 հավելվածի,

4) «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 4 հավելվածի,

5) «Աբովյանի ծննդատուն» պետական փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 5 հավելվածի,

6) «Նոր Հաճնի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 6 հավելվածի,

7) «Հրազդանի մարզային արյան բանկ» պետական փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 7 հավելվածի,

8) «Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա» պետական փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 8 հավելվածի,

9) «Կիմա Խաչատրյանի անվան Գառնիի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 9 հավելվածի,

10) «Արգելի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 10 հավելվածի,

11) «Սոլակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 11 հավելվածի,

12) «Բջնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 12 հավելվածի,

13) «Արզականի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 13 հավելվածի,

14) «Բջնիի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 14 հավելվածի,

15) «Ալափարսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 15 հավելվածի,

16) «Քռվեժի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 16 հավելվածի,

17) «Բալահովիտի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի հաստիքացուցակ՝ համաձայն N 17 հավելվածի,

18) «Արզնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 18 հավելվածի,

19) «Կոտայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 19 հավելվածի,

20) «Ակունքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 20 հավելվածի,

21) «Զովաղբյուրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 21 հավելվածի,

22) «Գեղաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 22 հավելվածի,

23) «Արամուսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 23 հավելվածի,

24) «Մայակովսկու առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 24 հավելվածի,

25) «Վերին Պտղնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 25 հավելվածի,

26) «Զառի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 26 հավելվածի,

27) «Կապուտանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 27 հավելվածի,

28) «Զովունու առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 28 հավելվածի,

29) «Քանաքեռավանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 29 հավելվածի,

30) «Պռոշյանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 30 հավելվածի,

31) «Մրգաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 31 հավելվածի,

32) «Նոր-Գեղիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 32 հավելվածի,

33) «Քասախի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 33 հավելվածի,

34) «Արագյուղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 34 հավելվածի,

35) «Նոր Երզնկայի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 35 հավելվածի։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և դրա գործողությունը տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՅԱՆ

**2018 թվականի մարտի 28**
**ք. Հրազդան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 մարտի 2018 թվականի N 84-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԱՐՈՎՅԱՆԻ ԾՆՆԴԱՏՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 177-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի դեկտեմբերի 3-ի N 517-Ա որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 59-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017 թվականի դեկտեմբերի 29-ի N 323-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Ստեղծել աուդիտորական առաջադրանքի աշխատանքային խումբ հետևյալ կազմով և գործուղել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Արովյանի ծննդատուն» պետական փակ բաժնետիրական ընկերություն *(այսուհետ ընկերություն)* 2018 թվականի ապրիլի 03-ից մինչև ապրիլի 13-ը ներառյալ ընկերությունում ֆինանսական աուդիտ իրականացնելու նպատակով՝

1) ***Կամիլլա Հունանյան*** - խմբի ղեկավար, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ,

2) ***Անահիտ Սպեխանյան*** - անդամ, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ,

3) ***Արգամ Առաքելյան*** - անդամ, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ,

4) ***Արամ Գրիգորյան*** - անդամ, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ:

2. Աուդիտորական խմբին՝ աուդիտորական առաջադրանքը իրականացնել 2016-2017 թվականների համար ներկայացված ֆինանսական և այլ բնույթի հաշվետվություններում տեղ գտած տեղեկությունների արժանահավատության և դրանց ստանդարտների կիրառելի հիմունքներին համապատասխանության, ընկերության կողմից կատարված փաստացի և դրամարկղային ծախսերի հիմնավորվածության, զուտ շահույթի տնօրինման, շահութաբաժնի հաշվարկման և վճարման գործընթացների, ընկերության կողմից մատուցված վճարովի

ծառայությունների դիմաց գանձվող գումարների հաշվառման օրինականացման, գնման ընթացակարգերի արձանագրություններում տեղ գտած տեղեկությունների, պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունների պայմանագրին համապատասխանության, աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների հաշվարկման և վճարման գործընթացի գնահատման նպատակով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**Կ. ԳՈՒԼՈՅԱՆ**

**2018 թվականի մարտի 29**
**ք. Հրազդան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 մարտի 2018 թվականի N 85-Ա

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասի, 1.12-րդ կետի «բ» ենթակետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան և Մեղրաձոր համայնքների մի խումբ բնակիչների դիմումները՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել՝ Հակոբ Հակոբյանին 60 000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ, Վարդուշ Թովմասյանին 60 000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ, Անդա Ասլանյանին 70 000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ և Գոհար Կնյազյանին 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հինգ աշխատանքային օրվա ժամկետում ապահովել գումարի վճարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2018 թվականի մարտի 29
ք. Հրազդան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2018 թվականի մարտի 29-ի N 85-Ա որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

| Հ/Հ | Անուն Ազգանուն | Բնակավայր | Գումարը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Հակոբ Հակոբյան | ք. Հրազդան, Երևանյան փողոց, 9 շենք, 9 բնակարան | 60 000 | |
| 2 | Վարդուշ Թովմասյան | ք. Հրազդան, Միկրոշրջան, 216 շենք, 34 բնակարան | 60 000 | |
| 3 | Աիդա Ասլանյան | ք. Հրազդան, Րաֆֆու փողոց, 32 բնակարան | 70 000 | |
| 4 | Գոհար Կնյազյան | գ. Մեղրաձոր | 50 000 | |